դրման ժանրային առումով ելակետային եզրից մեկնելով էլ՝ անմիջապես նշենք, որ միջնադարյան որևէ հեղինակի աշխատությունը ***պատմագրության*** ընդհանրական համածիրի մեջ ընդգրկելն ինքնին ենթադրում է դրան գրական արժեքի վերագրում, քանզի այդպես է պահանջում պատմագրության ժանրային նկարագիրն ու ժանրային օրինաչափությունը:

Ընդհանուր առմամբ՝ հայ բանասիրության մեջ պատմագրական երկերի գրական արժեքի մասին խոսակցություններ ու վերլուծումներ շատ են եղել: Խնդրի գոյությունը, անշուշտ, վիճարկման ենթակա չէ, քանզի պատմագրության ժանրային նկարագրում ***գրական***-ը անքակտելի էատարր է: «Պատմագրական երկերին հատուկ են ոչ թե գրական ինչ-որ հատկանիշներ,– այս կապակցությամբ նկատում է Մայիս Ավդալբեգյանը,– այլ պատմագեղագիտական միասնական սկզբունք, հեղինակային հավատամք, որի դրսևորմանն են ծառայում թե՛ պատմությունը, թե՛ գրականությունը միաժամանակ»[5]: Բայց, ցավոք, մեր գրականագետների ու բանասերների մեծ մասը, ինչպես մի առիթով նկատում է Կարապետ Մելիք-Օհանջանյանը՝ «***Գրական արժեքի*** տակ... սովորաբար հասկանում են հեղինակի ոճը» (ընդգծումը մերն է–Ա.Ն.)[6], կամ լավագույն դեպքում՝ պատմագրական երկերի ***գեղարվեստական*** կողմը: Եվ գրեթե միշտ երևույթը դիտարկել ու քննել են ըստ այդ տրամաբանության: Այնինչ, գեղարվեստականությունը, լինելով կարևոր էատարր, այդուհանդերձ, պատմագրական երկին ***գրական*** տարազումի առումով, որքան էլ զարմանալի ինչի, վճռական դեր չի խաղում: Սույն աշխատության խնդրադրությունում ***«իբրև գրական երկ»*** մասնավորումը կազմաբանվում է նախևառաջ այլ էատարրերով և ապա միայն ու հաճախ ոչ պարտադիր՝

---

5 ***Մայիս Ավդալբեգյան***, Հայ պատմագրության ժանրային մի քանի առանձնահատկություններ, «Հայ միջնադարյան գրականության ժանրեր» գրքում, էջ 7–8:

6 ***Կիրակոս Գանձակեցի***, Պատմություն Հայոց, Երևան, 1961, տե՛ս «Առաջաբանը», էջ Կէ: